ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2019թ. № 474

ՄԱՑԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մացակ Հովհաննեսի Մաթոսյանի 2019 թվականի նոյեմբերի 1-ի դիմումի հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքում Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն Սպիտակ համայնքի բնակիչ Մացակ Հովհաննեսի Մաթոսյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան, 368» հասցեում գտնվող հողամասում շինություն ինքնակամ կառուցելու մասին:

Մացակ Հովհաննեսի Մաթոսյանը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշել է, որ կատարել է իրավախախտումը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին:

3. Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2019թ. № 475

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 368 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ, 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ս.Ավետիսյան փողոց, թիվ 368 հասցեում գտնվող 06-006-0016-0035 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,054 հեկտար մակերեսով հողամասի վրա 2018 թվականին ինքնակամ կառուցված 88,63 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26112018-06-0017 վկայականը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Մացակ Հովհաննեսի Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոց, թիվ 368 հասցում գտնվող 06-006-0016-0035 կադաստրային ծածկագրով 0,054 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա

ինքնակամ կառուցված 88,63 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Մացակ Հովհաննեսի Մաթոսյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Մացակ Հովհաննեսի Մաթոսյանին.

1) համայնքի բյուջե վճարել 86 585 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2019թ. № 476

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Սպիտակ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 90-Ն որոշման 6-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Ապահովագրական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4215 հոդվածից 90 000 ՀՀ դրամ, «Արտագերատեսչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4217 հոդվածից 220 000 ՀՀ դրամ և « Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածից 200 000 ՀՀ դրամ տեղափոխել.

1) 482 500 ՀՀ դրամ՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Էներգետիկ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4212 հոդված,

2) 27 500 ՀՀ դրամ՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Կոմունալ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4213 հոդված:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2019թ. № 477

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 22-ի թիվ 97 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 9 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2019 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 124 000 (հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2019թ. դեկտեմբերի «23» թիվ 477 որոշման

Դրամական օգնություն ստացող քաղաքացիների ցուցակ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Սոց. քարտի համարը	Անձնագրային տվյալները	Գումարը ՀՀ դրամ
1	Կարինե Գրիգորյան	5111550117	005141445, տրված 23.05.2014թ., 052-ի կողմից	40 000
2	Վեներա Բիձյան	7814820324	007639974, տրված 23.02.2016թ., 052-ի կողմից	44 000
3	Հրայր Կոստումյան	1101634774	AN0434085, տրված 09.04.2013թ., 052-ի կողմից	40 000

Ընդամենը՝ 124 000 (հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Գյուլազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2019թ. № 478 - Ա

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՐԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ պարբերությամբ՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի 2019 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական դասակարգման «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածից Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին վճարել լրավճար՝ համաձայն հավելվածի:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
Ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
«23» դեկտեմբերի 2019թ. թիվ 478 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԼՐԱՎՃԱՐ ՍՏԱՑՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Լրավճարը ՀՀ դրամ
1	Սահակյան Գագիկ	Համայնքի ղեկավար	420 000
2	Սահակյան Վարդան	Համայնքի ղեկավարի ղեղակալ	320 000
3	Գյուլազյան Անահիտ	Աշխատակազմի քարտուղար	320 000
4	Ադամյան Արմեն	Համայնքի ղեկավարի խորհրդական (տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու)	275 000
5	Մաթոսյան Արսինե Սամվելի	Համայնքի ղեկավարի օգնական	37 500
6	Յարմալոյան Նորայր	Աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան	160 000
7	Թամամյան Միշա	Աշխատակազմի գլխավոր մասնագետի ժ/պ	160 000
8	Արշակյան Արմինե	Աշխատակազմի առաջատար մասնագետի ժ/պ	37 500
9	Թումանյան Արմինե	Աշխ. քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ	160 000
10	Սարդարյան Ռուզաննա	Աշխ. քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետ	160 000
11	Միրզոյան Հենրիկ	Աշխատակազմի ֆին. և եկամ. հավաքագրման բաժնի պետ	240 000
12	Օհանյան Լուսինե	Աշխ. ֆին. և եկ. հավաք. բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահի ժ/պ	160 000
13	Թումանյան Անի	Աշխ. Ֆին. և եկ. հավաք. բաժնի գլխավոր մասնագետ	160 000
14	Ավետիսյան Արսեն	Աշխ. ֆին. և եկ. հավաք. բաժնի գլխավոր մասնագետ-գնումների համակարգող	160 000
15	Խաչատրյան Սուսաննա	Աշխ. Ֆին. և եկ. հավաք. բաժնի առաջատար մասնագետ	90 000
16	Գասպարյան Լիաննա	Աշխ. Ֆին. և եկ. հավաք. բաժնի առաջատար մասնագետ	90 000
17	Լամբարյան Կարինե	Աշխ.ֆին.և եկ.հավ.բաժնի 1-ին կարգի մասնագ-գանձապահ	75 500
18	Ավետիսյան Արման	Աշխատ. քաղ. հողօգտ. կոմ. սպ և տրանս. բաժնի պետի ժ/պ	240 000
19	Համբարյան Լուսինե	Աշխ. քաղ. հող. կոմ. սպ և տրանս. բաժնի պետի տեղակալ	210 000
20	Աբգարյան Գարիկ	Աշխ. քաղ. հող. կոմ. սպ և տրանս. բաժնի առաջ. մասն.	90 000
21	Սահակյան Լևոն	Աշխ. քաղ. հող. կոմ. սպ և տրանս. բաժնի 1-ին կարգի մասն. ժ/պ	75 500
22	Թումանյան Գայանե	Աշխ. քաղ. հող. կոմ. սպ և տր. բաժնի առաջատ. մասնագետ	90 000
23	Դանիելյան Մելանյա	Աշխ. սոց. մշ. երիտ. սպորտի և լր. բաժնի առաջ. մասնագետի ժ/պ	90 000
24	Մնոյան Հասմիկ	Աշխ. քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ	90 000
25	Մկրտչյան Վիկտորյա	Գործավար	100 000
26	Տեր-Օհանյան Գագիկ	Ավտովարորդ	95 000
27	Օհանյան Ալբերտ	Ավտովարորդ	90 000
28	Կիրակոսյան Սեդա	հավաքարար	75 500
29	Մելիքյան Գոհար	հավաքարար	75 500
30	Դարչինյան Լյովա	տնտեսվար	75 500
31	Դարչինյան Վերգինե Սամվելի	Առաջատար մասնագետ	90 000

32	Պողոսյան Արմեն Սերյոժայի	Ցանցային ադմինիստրատոր	100 000
33	Համբարյան Ռաֆիկ Դավիթի	Էլեկտրիկ	75 500
	Ընդամենը		4 688 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2019թ. № 479 - Ա

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՍՊԻՏԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼՐԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ պարբերությամբ՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի 2019 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանման կատարման ծախսեր» գործառական դասակարգման «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածից Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Սպիտակի տարածքային բաժնի պետ Վանուհի Ասատրյանին վճարել լրավճար՝ 110 000 (հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, իսկ նույն բաժնի 1-ին կարգի մասնագետ Նյուրա Դանիելյանին վճարել լրավճար՝ 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
Ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2019թ. № 480

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով, հաշվի առնելով աշխատակազմի սոցիալական, մշակույթի, երիտասարդության, սպորտի և լրատվության բաժնի պետ Հովհաննես Խոյեցյանի զեկուցագիրը՝ ամանորյա տոնական միջոցառումների կազմակերպման և անցկացման համար ամանորյա եղևնու և քաղաքի տարածքի լուսավորության համար էլեկտրաինքնակառավարման վահանակի պատրաստման, հանրային սննդի նյութեր, հուշանվեր, տոնական կոմպոզիցիաներ և հատուկ նպատակային այլ նյութեր ձեռք բերելու համար ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2019 թվականի բյուջեի՝

1) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածից հատկացնել 90 000 ՀՀ դրամ՝ էլեկտրաինքնակառավարման վահանակի պատրաստման և սպասարկման ծառայություն ձեռք բերելու համար:

2) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4267 հոդվածից հատկացնել 79 000 ՀՀ դրամ՝ կենցաղային և հանրային սննդի նյութեր ձեռք բերելու համար:

3) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «հատուկ նպատակային նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 453 080 ՀՀ դրամ՝ հատուկ նպատակային նյութեր, հուշանվեր և ամանորյա կոմպոզիցիաներ ձեռք բերելու համար:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2019թ. № 481

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՎԱՀԱՆ ՀԱՄԼԵՏԻ ՂՈՉԻԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ և ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանով, հաշվի առնելով, որ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2303639 վկայականի համաձայն 0,696 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Վահան Համլետի Ղոչիկյանին, սակայն Սպիտակ համայնքի կադաստրային քարտեզում հողամասի մակերեսը և գործառնական նշանակությունը սխալ է նշված՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի կադաստրային քարտեզում կատարել Վահան Համլետի Ղոչիկյանին սեփականության իրավունքով պատկանող 0,696 հեկտար մակերեսով հողամասի գծային չափերի և հողամասի գործառնական նշանակության ուղղում՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառնական նշանակությունը փոխարինելով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2019թ. № 482

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔՈՒՄ ԿԻՍԱՆԿՈՒՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի 3.1-ին և 7-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2797273 վկայականը, բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի համաձայնագիրը, Մարտուն Նշանի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մարտուն Նշանի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, շենք 6, թիվ 3/2» հասցեում գտնվող 27,6 քառակուսի մետր մակերեսով կիասնկուղի գործառնական նշանակությունը փոխել հասարակական գործառնական նշանակության՝ որպես վարսավիրանոց օգտագործելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի գործառնական նշանակության փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 23
ք.Սպիտակ